

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԻՆ

Համամիութենական եւ միջեկեղեցական հարցերու ծանօթ մասնագէտ Հ. Փիէռ Տիւփրէի այս յայտ շահեկան յօդուածը, որուն քարգմանութիւնը կը ներկայացնենք հեղինակին ձեռագրէն, լոյս տեսած է «La France Catholique» շաբաթաթերթի 21 Յունուար 1972ի թիւին մէջ համառոտուած ձեւով մը: Ծնորհակալութիւն կը յայտնենք յիշեալ թերթին խմբագրութեան՝ յօդուածը վերհրատարակելու ազնիւ արտօնութեան համար: Բնագրին խորագիրն է «Համամիութենականութեան երեւոյթներ 1972ին»:

Այս դոյզն աշխատանքը կը նուիրենք Ս. Ներսէս Ծնորհալիի պաշտելի յիշատակին, որ ուրքը դարեր առաջ զգաց իր էութեան խորքին մէջ հաւատքի եւ սիրոյ անհամեմատ ապրումով մը եւ ջանաց իր շուրջը ճառագայթել՝ այն ինչ որ հիմնական ներշնչումը պիտի կազմէր մերօրեայ համամիութենական (œcuménique) շարժումին:

Հ. ԼԵՒՈՆ ԶԵՔԻՅԱՆ

Համամիութենական շարժումը նգնաժամ մը կ'անցընէ

Նորոյթի կարգ անցած է ըսել թէ Համամիութենական շարժումը «քրիզ» մը կ'անցընէ: Գէշ պիտի չըլլար յիշել թէ Փրանսերէն «քրիզ» բառը կը սերի յունարէն բառէ մը՝ որ նախ կը նշանակէ դատաստան, դատողութիւն¹ եւ յետոյ՝ ընտրութիւն, որոշում: Բառին մեզ այստեղ հետաքրքրող իմաստին շուրջ մտպէրի բառարանը հետեւեալ սահմանումը կու տայ. «Իրերու, դէպքերու, դադափարներու յեղաշրջումին մէջ լուրջ հանգրուան մը»: Հետեւաբար, «քրիզ»ը յեղաշրջումի մը կարեւոր ու վճռական մէկ փուլն է: Այդ իմաստով, այո՛, Համամիութիւնը քրիզ մը կ'անցընէ եւ ասիկա վերջին տասնամեակի ընթացքին անոր սքանչելի յառաջագիծութեան նշանն է: Երբ շարժում մը կը հասնի այն կէտին՝ ուր կարգը կու գայ կարեւոր դերը

որոշումներու կամ վճռական երկընտրանքներու, կարելի² է խորհիլ ասկէ աւելի մեծ յաջողութիւն մը:

Համամիութենական շարժումը «քրիզ» (զոր այսուհետեւ պիտի բացատրենք նգնաժամ կամ տագնապ հայերէն բառով) պիտի չանցընէր՝ եթէ եղած չըլլար եւ չշարունակէր մնալ այնպիսի շարժում մը, որուն իրենք դիրենք կապած են ու կը կապեն քրիստոնեայ աշխարհի կենդանի ոյժերը:

Լաւ դիտեմ թէ անոնք որ Համամիութենականութեան քրիզի մասին կը խօսին, բառը այս իմաստով չեն գործածեր, այլ կ'ուզեն մատնանշել՝ բառին բաւական ընթացիկ առումով՝ աշխուժութեան նուազում, գործունէութեան դադար, կամ աւելի դիպող արտայայտութեամբ մը՝ լճացում: Բայց այս յոռետեսութիւնն անգամ վկայութիւն մը պիտի չըլլա՞ր ի նպաստ Համամիութենական շարժումին՝ այնպիսի ատեն մը, ուր ոչինչ աւելի յոռի տեսնուած է քան լաւատեսութիւնը կամ յաջողութիւնը:

Ստոյգ է թէ անոնց համար՝ որոնք աւելի չեն հետաքրքրուիր Եկեղեցիով կամ դոնէ անոր կազմակերպեալ հանգամանքով, համամիութեան շարժումն ալ կորսնցուցած է իր հետաքրքրականութիւնը եւ արդէն «դերազանցուած է»: Ստոյգ է նաեւ թէ զգալի է հակադեմոսթիւն մը «Համամիութենականութիւն» բառին տարադէպ եւ ամէն բանի յարմարցուող գործածութեան դէմ՝ այնքան տարտամ եւ անորոշ բովանդակութեամբ մը՝ որ երբեմն բնաւ կապակցութիւն չի թուիր ունենալ Վատիկանեան Բ. Ժողովի «Համամիութենական շարժում»ի մասին տուած հետեւեալ սահմանումին հետ. «Այն գործունէութիւններն ու ձեռնարկները, որոնք երեւան կու գան Եկեղեցւոյ զանազան կարօտութիւններուն եւ ժամանակներու պատենհանութեան համաձայն, նպատակ ունենալով սատարել քրիստոնեաներու միութեան»³: Անկասկած, միութեան այս մտահոգութիւնը ներկայ գըտնուելու է Եկեղեցւոյ բոլոր գործունէութիւններուն մէջ եւ ամէն մանուկը է Եկեղեցւոյ բոլոր գործունէութիւններուն է որ կը ութեան փնտռութիւն շուրջ եւ ահա այս գործունէութիւնն է որ կը նշանակէ Համամիութենականութիւն: Միւս կողմէ, երիտասարդները դիւսաւորապէս կը հակադրեն – կը կարծեմ շատ արդարացիօրէն – լոկ անուանական Համամիութենականութեան մը դէմ, որ հեռաւոր ապագայի մը կը յետաձգէ միութիւնը՝ հաւաստելով հանդերձ հետապնդումը, խուսափելու համար յաջորդաբար ստեղծուելիք դրական յանձնառութիւններէ, վտանգներէ, տաքնապններէ մանաւանդ՝ որոնք կապուած են միութեան յարաճուն վերահաստատումի գործին

1. Վատիկանեան Բ. Տիեզ. Ժողով, Վճռադիր Համամիութեան մասին՝ «Միութեան վերահաստատում», հայ. թրգ. Վենետիկ 1967, հմ. 4, էջ 143:

Արեւելքի հետ այս համեմատութիւնը յաճախ կարելոր է նաեւ զատորոշելու համար այն նուրբ սահմանը՝ որ կը զատէ ինչ որ հաւատքի մաս կը կաղմէ եւ ինչ որ, թէպէտեւ օրինաւոր, բայց աստուածաբանօրէն՝ հաւատքի հետ անհրաժեշտ կապակցեալ մշակում մը չէ:

Երբ Արեւելքի հետ նոյն հաւատքը կը դաւանինք, շատ յաճախականօրէն՝ մեր այդ հաւատքը արտայայտելու կերպը, խորհուրդին այդ որոշ տեսակէտին մերձենալու եւ զայն ընդհանուրին մէջ զետեղելու եղանակը՝ տարբեր է: Այս տարբերութիւնը, սակայն, պէտք չէ որ միութեան արգելք ըլլայ, ընդհակառակը՝ այս տեսակ տարբերութիւնները միութիւնը աւելի կաթողիկէ, այսինքն ընդհանրական կը դարձնեն եւ կը նպաստեն նուազ միակողմանիօրէն արտայայտելու խորհուրդին անսահման անճառելիութիւնը⁶:

Դասական օրինակ մը՝ որ երկար ատեն տարածայնութեան եւ հակաճառութեան պատճառ եղած է «Եւ յՈրդւոյ» բանաձեւն է: Նորագոյն ուսումնասիրութիւնները միշտ աւելի յստակօրէն ցոյց կու տան այս հարցին շուրջ արեւելեան եւ արեւմտեան աստուածաբանութիւններու իրար ամբողջացնող հանդամանքը⁷:

Զգտում մը ունինք միշտ մեր հաւատքը վերածելու՝ հաւատքի մասին մեր ունեցած հասկացողութեան: Դժուարութիւն մըն է ասիկա՝ որուն շատ յաճախակի կերպով կը հանդիպի աստուածաբանական տրամախօսութիւնը, որ կ'որոնէ համաձայնութիւն մը հաւատքի հասարակաց դաւանութեան անհրաժեշտ էականին վրայ: Հարկ է խուսափիլ թէ՛ այդ էականը նուազեցնելէ կամ անդամատելէ եւ թէ՛ անոր վրայ աւելցնելէ տեսութիւններ՝ որոնք, անշուշտ օրինաւոր ըլլալով հանդերձ, չեն կրնար պահանջուիլ. որովհետեւ «Վերահաստատելու կամ պահպանելու համար հաղորդակցութիւնն ու միութիւնը, պէտք չէ աւելի բեռ մը դնել քան ինչ որ անհրաժեշտ է»⁸:

Այս մշտապէս նուրբ ընտրողութեան համար՝ Արեւելքի հաւատքին հետ համեմատութիւնը նպաստաւոր է՝ գուցէ յատկապէս արեւմուտցիներու իրարու միջեւ վիճարանութիւններուն մէջ: Ասիկա փորձով ստուգուած է՝ Ուիկտորի վերոյիշեալ համաձայնութեան խմբագրութեան պատրաստական վիճարանութիւններու ընթացքին:

Ի՞նչպէս չի չել հոս այն կարելոր հասարակաց յայտարարու-



6. Վճռ. «Միութեան վերահաստատումը», հտ. 17 եւ Պօղոս Զ.ի Ֆէնէրի մէջ արտասանած ճառը՝ 25. 7. 1967ին:

7. Հմմտ. Հ. Կարիկի նոր եւ շատ հետաքրքրական ուսումնասիրութիւնը. «Ս. Հոգիին բխումը առաջին հազարամեակի յատին աստուածաբանութեան մէջ», «Contacts», 23 (1971), էջ 282-309:

8. Վճռ. «Միութեան վերահաստատումը», հմ. 18 եւ Պօղոս Զ.ի Ֆէնէրի մէջ արտասանած ճառը 25. 7. 1967ին:

Խմանկար Ս. Ղազարու Եկեղեցիին,
Գծագրիչ E. Paoletti (ԺԹ. դար)

